

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

11-րդ դասարան

Տևողությունը 150 րոպե

**Ա. Աշխատանք բնագրով:**

Նավասարդի օրերն էին: Ուխտավորները կանգնեցին մի ժամի չափ՝ ձեռքներին մի քանի դեկան ոսկի: Տեղ հասան Ադանայից և Մարադայից եկող խաչերթերը: Քիչ անց ձիու սմբակների դոփյուններ լսվեցին. մի կանգուն հեռավորությունից քառատրոփ վարգով սլանում էին ձիեր, և տարորոշվում էին հեծյալների ուրվագծերը: Հոգևորականներն ու անվեհեր զինվորները սկսեցին հանել զենքերն ու երթային պարեգոտները: Շողշողացին տոնական հանդերձանքների ոսկին ու արծաթը: Բոլորից առանձնա՛նում էր բարձր խույրով մարդու շքեղ պատմուճանը: Չորս հոգևորական պատրիարքի գլխի վրա ամպհովանի բռնեցին: Բոլորի առջևից մի մարդ էր գնում՝ պարզած ձեռքերի մեջ ինչ-որ բան բերելով: Գրիգոր Լուսավորչի աջն էր՝ դրված արծաթագոծ մատուցարանի վրա: Խորախորհուրդ լռությունը խախտեցին ցնձագին բացականչություններ. արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել ուխտավորներին: Նրանք նետվեցին Միսից եկողներին ընդառաջ, շրջապատեցին կաթողիկոսին և արծաթյա մատուցարանը տանող մարդուն: Բարձրահասակ պատանի էր՝ պարթև, վանականի տոնական հանդերձով. քայլում էր՝ վեհ զլուխը բարձր պահած: Մասունքը կրող պատանին քայլում էր վեհորեն: Մի քանիսը ծնկի իջան՝ խորասուզվելով աղոթքի մեջ. նրանք աղոթք էին հղում Բարձրյալին:

1. Բացատրե՛ք **դեկան** բառի իմաստը: Նշե՛ք՝ որ լեզվից է այն փոխառված: Ո՞ր թագավորի անվան հետ է այն կապվում: Գրե՛ք **դեկան** բառի համանունական շարքը և բացատրե՛ք իմաստները: (3 միավոր)

2. Նշե՛ք՝ **նավասարդ** բառը որ լեզվից է փոխառված, բացատրե՛ք իմաստը: Հայոց **նավասարդը** այժմյան ո՞ր ամիսներին էր համապատասխանում: (2 միավոր)

3. Գրե՛ք **վարգ, խույր, ամպհովանի, մասունք, անվեհեր** բառերի բացատրությունները: (2 միավոր)

4. Գրե՛ք **ոսկի** բառով կազմված չորս շրջասություն և նշե՛ք նրանց համարժեք բառերը: (2 միավոր)

5. Տեքստից դո՛ւրս գրեք **պարեգոտ** բառի հոմանիշը: Շարքը համալրե՛ք առնվազն երկու հոմանիշով: (1 միավոր)

6. Բացատրե՛ք **պատրիարք** բառի իմաստը: Գրե՛ք առնվազն երեք եկեղեցական կոչում՝ բացատրելով դրանց իմաստները: (1.5 միավոր)

7. Գրե՛ք **պարթև, հանդերձ, կանգուն** բառերի համանունական շարքերը և բացատրե՛ք իմաստները: (1.5 միավոր)

8. Նշե՛ք տրված բառերում կատարված հնչունափոխությունները, վերականգնե՛ք անհնչունափոխ ձևերը՝ նշելով՝ հնչունափոխությունները արմատներո՞ւմ են, թե՞ ածանցներում՝ **ուրվագիծ, հոգևորական, մատուցարան, խախտել, խորասուզվել, Բարձրյալ**: (2 միավոր)

Բ. Շարադրություն՝ «Մրտի թելադրանքով» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)